

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ

<https://doi.org/10.59982/18294359-24.2-ta-10>

*Արփինե Գեղամի Բիշարյան*

*ի.գ.թ.*

*ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն*

*a.bisharyan@mail.ru*

**Ամփոփագիր**

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ինստիտուտի սահմանադրական հիմքերը դրվել է 1995 թվականի Սահմանադրության ընդունմամբ:

Երկրի վարչատարածքային կառուցվածքի նոր համակարգի հաստատմամբ, ինչպես նաև 1996 թվականին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցավ իշխանության ապակենտրոնացում, որն էլ հիմք ապահովեց տեղական ինքնակառավարման ձևավորմանը:

Այս շրջադարձային փոփոխություններից ի վեր տեղական ինքնակառավարումը Երևանում ևս կրել է առանցքային փոփոխություններ՝ սկսած Երևանի կարգավիճակից, վերջացրած ավագանու և քաղաքապետի ընտրակարգով, նրանց լիազորությունների փոխհարաբերակցությամբ:

Երևանը առանձնահատուկ կարգավիճակ ունեցող համայնք է, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային կյանքում մայրաքաղաքի բացառիկ դերակատարմամբ, ինչպես նաև բնակչության կենտրոնացվածության բարձր աստիճանով:

2005թ. նոյեմբերի 27-ի՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերվող սահմանադրական փոփոխություններից հիմնականը Երևանի ճանաչումն էր որպես համայնք: Սահմանադրական կարգավորումների արդյունքում Երևանում ևս անցկացվեցին տեղական ընտրություններ, որն առաջին անգամ կազմակերպվեց 2009թ. մայիսի 31-ին և վերջինիս ինքնակառավարման ոլորտում ամրագրվեցին յուրօրինակ պայմաններ և սկզբունքներ, որոնք բնորոշ չէին Հայաստանի մնացյալ համայնքների ինքնակառավարման համակարգերին: Երևանի ինքնակառավարման ոլորտում նմանատիպ փոփոխությունները պայմանավորված էին մայրաքաղաքի զարգացման արագ տեմպերով, ինքնակառավարման համակարգի ձևավորման և գործառնման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ և տարբեր ոլորտներում միասնական ու արդյունավետ քաղաքականություն վարելու կարևորությամբ:

**Հիմնարատեր:** Տեղական ինքնակառավարում, Երևան համայնք, ավագանի, համայնքի ղեկավար, քվե, մեծամասնական համակարգ, կուսակցություն:

### **Ներածություն**

Խորհրդային Միության փլուզումից հետո սկսված բարեփոխումները շոշափեցին նաև հանրապետության վարչատարածքային կառուցվածքը: Պետական իշխանության իրականացման գործում կարևոր էին 1995 թվականի Սահմանադրության ընդունումը, ինչպես նաև նույն թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը [Ալթունյան, 94]: Ըստ այդմ, վարչատարածքային բաժանման երկաստիճան նոր համակարգի առաջին աստիճանը ձևավորվեց տասը մարզից և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքից, իսկ երկրորդ աստիճանը՝ քառասունյոթ քաղաքային, տասներկու թաղային և ութ հարյուր յոթանասունմեկ գյուղական համայնքներից, որոնց թիվը հետագայում փոփոխվել է:

Երևանը Հայաստանի Հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է և առանձնանում է իր կառավարման համակարգով: Խորհրդային իշխանության տարիներին մայրաքաղաքը բաժանված էր տասը շրջանների, որտեղ համապատասխան տեղական իշխանությունների (շրջանային խորհուրդ և գործադիր մարմին) միջոցով լուծվում էին տեղական նշանակության հարցեր: Սահմանադրությամբ ամրագրվել էին համայնքների երեք տեսակներ՝ քաղաքային, գյուղական և թաղային:

1995 թվականին ընդունված Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում էր թաղային համայնքներում (ի դեպ, թաղային համայնքներ ձևավորվել էին բացառապես Երևան քաղաքի վարչական տարածքում): Միաժամանակ գոյություն ուներ նաև Երևանի քաղաքային խորհուրդ, որի պատգամավորներն ընտրվում էին բնակիչների կողմից: Քաղխորհուրդն ընտրում էր քաղաքային խորհրդի նախագահ՝ գործադիր մարմնի ղեկավար: Կառավարման այս մոդելը պահպանվել է մինչև 1995 թվականի հուլիսի 5-ը, երբ ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Հաշվի առնելով մայրաքաղաքի առանձնահատկությունները՝ մինչև ՀՀ 2005 թվականի Սահմանադրության ընդունումը, Երևանը ստացավ մարզի կարգավիճակ (մարզի կարգավիճակ ունեցող քաղաք): Մասնավորապես, եթե ՀՀ մարզպետներին նշանակում և ազատում էր ՀՀ Կառավարությունը, ապա Երևանի քաղաքապետին՝ ՀՀ նախագահը: Թեև ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի համար սահմանված էին գրեթե նույն տեսակի և ծավալի լիազորություններ, այնուամենայնիվ, ՀՀ նախագահի կողմից 1997 թվականին ընդունվել են երկու տարբեր հրամանագրեր՝ «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին»: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետը մշտապես ընդգրկված է եղել ՀՀ նախագահին կից գործող անվտանգության խորհրդի կազմում, ինչը նշանակում է, որ նա մասնակից է պետության

համար կարևորագույն նշանակություն ունեցող որոշումների ընդունմանը [Վարդանյան, 108]: 2005 թվականի Սահմանադրության նախագծի քննարկումների ժամանակ Երևան քաղաքի կառավարման մոդելն արժանացել էր Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի քննադատությանը, քանզի գոյություն ունեցող համակարգը թույլ չէր տալիս Երևանում ունենալ միասնական ընտրովի տեղական իշխանությունների համակարգ: Ընդունելով նշված քննադատությունը, ինչպես նաև հաշվի առնելով տեղական և միջազգային փորձագետների այլ դիտողություններ ու առաջարկություններ՝ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով որպես վարչատարածքային միավորներ շարունակեցին մնալ ՀՀ մարզերն ու համայնքները, որոնց կազմից հանվեցին թաղային համայնքները:

Երևան քաղաքը ստացավ համայնքի կարգավիճակ, որում, տեղական ինքնակառավարումից զատ, իրականացվելու էր նաև տարածքային կառավարում՝ բոլոր հարաբերությունների կարգավորումը թողնելով առանձին օրենքի կարգավորմանը: Բացառիկ դեպքերում, ՀՀ Կառավարության որոշմամբ, Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների:

Սահմանադրության 108-րդ հոդվածով սահմանվեց, որ Երևանը համայնք է: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել նաև Երևանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Փաստորեն, սահմանադրական փոփոխությունների համաձայն, Երևան քաղաքը ստացավ համայնքի կարգավիճակ, որում, տեղական ինքնակառավարումից զատ, իրականացվելու է նաև տարածքային կառավարում՝ բոլոր հարաբերությունների կարգավորումը թողնելով առանձին օրենքի կարգավորմանը [Մարգարյան, 1]:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ Երևանը համարվում է Երևան քաղաքի թաղային համայնքների իրավահաջորդը, սակայն անդրադարձ չի կատարվել մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի ընդունած որոշումների իրավահաջորդության հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ Երևան քաղաքի կարգավիճակը փոխվել է: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումից հետո, Երևանի քաղաքապետը՝ որպես տարածքային կառավարման մարմին, դադարել է գոյություն ունենալ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած վերը նշված հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի, իրավահաջորդ է Հայաստանի Հանրապետությունը, քանի որ

մինչև Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումը Երևանի քաղաքապետն ունեցել է պետական մարմնի (մարզպետի) կարգավիճակ և իրականացրել է պետական (տարածքային) կառավարման գործառույթներ՝ «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Սահմանադրությամբ ամրագվեց, որ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվում են համապատասխան օրենքի ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում: Մինչ այդ, Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումը նախատեսված էր իրականացնել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով (117-րդ հոդվածի 12-րդ մաս): Իսկ 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով վերջնականորեն կարգավորվեց քաղաքի տարածքային կառավարման հիմնահարցը, իսկ առաջին անգամ Երևանի ավագանու ընտրություններն անց են կացվել 2009 թվականի մայիսի 31-ին: Երևանի հերթական և արտահերթ ընտրությունները նշանակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Ներկայումս Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ զարգացումը: Երևանի վարչական սահմանները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևանը իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: Սահմանադրությամբ ամրագվեց, որ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվում են համապատասխան օրենքի ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում: Մինչ այդ, Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումը նախատեսված էր իրականացնել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով (117-րդ հոդվածի 12-րդ մաս): «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն սահմանվեցին Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման հետևյալ մարմինները՝

- 1) Երևանի ավագանին.
- 2) Երևանի քաղաքապետը:

Առանձնահատուկ է նաև Երևանի ավագանու կազմավորման մեխանիզմը. Երևան քաղաքի պարագայում կիրառվել է համամասնական ընտրությունների մեխանիզմը, այսինքն՝ որպես ավագանու անդամության թեկնածու առաջադրվում են քաղաքական կուսակցությունները և դաշինքները: Երևանի ավագանու ընտրություններում ընտրական շեմը հաղթահարած քաղաքական ուժը, որ ստանում է ընտրողների ձայների կեսից ավելին, նրա ցուցակը գլխավորող թեկնածուն համարվում է Երևանի քաղաքապետ, մյուս բոլոր դեպքերում Երևանի քաղաքապետն ընտրվում է ավագանու կազմից՝ ավագանու

անդամների կողմից քվեարկությամբ: Երևան քաղաքի՝ որպես համայնքի մյուս կարևոր առանձնահատկությունը վերաբերում է ներքին վարչատարածքային կառուցվածքին. քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների: Վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը համարվում է վարչական, նշանակումը և ազատումը կատարում է Երևանի քաղաքապետը: Ընդհանրացնելով նշենք, որ Երևանը առանձնահատուկ կարգավիճակ ունեցող համայնք է՝ պայմանավորված բնակչության կենտրոնացվածության բարձր աստիճանով, արդյունքում արդարացի էր քաղաքի կառավարումը առանձին օրենքով կարգավորելը:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին սահմանադրական փոփոխությունների համատեքստում՝ ընդունվեցին նոր՝ «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը և Երևան քաղաքի օրինակով փոփոխվեց նաև Գյումրի և Վանաձոր քաղաքների տեղական իշխանությունների ձևավորման կարգը: Նոր կարգի համաձայն, Գյումրի և Վանաձոր քաղաքներում բնակիչներն ուղղակի քվեարկությամբ ընտրում են միայն կուսակցությունների և կուսակցական դաշինքների համամասնական ցուցակներով ներկայացված ավագանի, որն էլ իր հերթին ընտրում է համայնքի ղեկավարին:

Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում ավագանու ընտրությունների ընտրական համակարգը համամասնական է, որը 2015 թվականի սահմանադրական կարգավորումներով էր նախատեսված, ապա համայնքների միավորման գործընթացի ավարտով պայմանավորված, Հայաստանի գրեթե բոլոր համայնքներում նախատեսվեցին համայնքի ղեկավարի անուղղակի ընտրություններ, բացառությամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված որոշ համայնքների, որտեղ համայնքների միավորում չի եղել:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ: Ավագանին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և գործում է միայն ի շահ Երևանի և նրա անունից:

Երևանի ավագանին կոլեգիալ մարմին է՝ կազմված է 65 անդամից: Երևանը Հայաստանի Հանրապետությունում միակ համայնքն է, որտեղ ավագանու ընտրությունն անցկացվում է համամասնական ընտրակարգով: Երևանի ավագանու ընտրության ժամանակ Երևանի ողջ տարածքը մեկ բազմամանդատ ընտրատարածք է: Երևանի ավագանու հերթական և արտահերթ ընտրությունները նշանակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Արտահերթ ընտրություններ նշանակելու մասին կառավարության որոշումը հրապարակվում է Երևանի ավագանին արձակելու մասին որոշման հետ միաժամանակ [Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք, 254]:

Երևանի պարագայում կիրառվել է համամասնական ընտրությունների

մեխանիզմը, այսինքն՝ որպես ավագանու անդամության թեկնածու առաջադրվում են քաղաքական կուսակցությունները, այլ ոչ թե առանձին անհատներ:

Երևանի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու իրավունքը կրում են միայն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Երևանի ավագանու թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ կուսակցության ընտրական ցուցակով: Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները մերժման հիմքերի բացակայության պայմաններում ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցության կողմից: Կուսակցությունը կարող է ընդգրկվել միայն կուսակցությունների մեկ դաշինքի կազմում: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունը չի կարող ինքնուրույն մասնակցել ընտրություններին: Կուսակցությունների դաշինքում ընդգրկվելու որոշումն ընդունվում է կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի որոշմամբ: Կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը կազմվում է դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած առանձին ցուցակից: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակները հաստատվում և առաջադրվում են կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի որոշմամբ (դաշինքի անդամ կուսակցությունների մշտական գործող ղեկավար մարմինների որոշումներով): Ընտրական ցուցակների բոլոր էջերը կնքվում և ստորագրվում են կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) իրավասու անձի կողմից:

Հատկանշական է, որ համամասնական ընտրությունների մեխանիզմ Հայաստանում կիրառվում է միայն ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում, այն էլ մեծամասնական համակարգի հետ զուգորդված, իսկ Երևանի ավագանին կազմավորվում է միայն (100%) համամասնական եղանակով: Այս կապակցությամբ արժե նշել, որ 1995 թվականի Սահմանադրությամբ համայնքի ավագանու անդամների թիվը կարող էր լինել 5-ից 15 անդամ՝ պայմանավորված բնակչության թվաքանակով:

Ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 6, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 8 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

Եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 6 (8) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ի դեպ, ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում հաղթող են համարվում այն կուսակցություններն ու դաշինքները, որոնք ստանում են քվեարկությանը մասնակցած ընտրողների առնվազն 5%-ի քվե: Այսինքն՝ Երևանի ավագանու ընտրություններում հաղթելու շեմը ավելի բարձր է Ազգային ժողովի ընտրությունների համար նախատեսված շեմից: Այն քաղաքական ուժը, որ ստանում է ընտրողների ձայների կեսից ավելին, նրա ցուցակը գլխավորող թեկնածուն համարվում է Երևանի քաղաքապետ, մյուս բոլոր դեպքերում Երևանի քաղաքապետն ընտրվում է ավագանու կազմից՝ ավագանու անդամների կողմից:

Ավագանու անդամների մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Յուրաքանչյուր ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր ընտրական ցուցակին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվերն են:

Մնացած մանդատներն ընտրական ցուցակների միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն ընտրական ցուցակին, որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ:

### Եզրակացություն

Ամփոփելով տեղական ինքնակառավարման կազմակերպման առանձնահատկությունները՝ հարկ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ ո՛չ «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, ո՛չ էլ ոլորտը կարգավորող օրենքով Երևանի ավագանու պաշտոնին ո՛չ տարիքային, ո՛չ կրթական չափանիշներ չեն սահմանվել: «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի, Գյումրիի և Վանաձորի ավագանու անդամ կարող են ընտրվել սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Ի տարբերություն ավագանու անդամի, Երևանի քաղաքապետ կարող է ընտրվել 30 տարին լրացած ՀՀ քաղաքացին:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները համայնքային քաղաքական պաշտոններն են, իսկ Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնը՝ վարչական (Հոդված 6, 5-րդ մաս): Օրենքի համաձայն՝ վարչական պաշտոն զբաղեցնելու համար պարտադիր է բարձրագույն կրթությունը, իսկ քաղաքական պաշտոն զբաղեցնելու համար նման պահանջ չի նախատեսված: Այս առումով, մեր դիտարկմամբ կա անհրաժեշտություն հստակեցնելու և՛ համայնքի ղեկավարի, և՛ ավագանու անդամի թեկնածուի կրթական և տարիքային ցենզերը, քանի որ համայնքի ղեկավարը, լինելով տեղական ինքնակառավարման գործադիր մարմին, իսկ ավագանին՝ ներկայացուցչական մարմին, նպատակահարմար և արդյունավետ կլինե՞ր կազմավորել պրոֆեսիոնալ և փորձառու կադրերի ճիշտ ընտրությամբ: Ի վերջո, թեկնածուների առաջադրումն ընտրական գործընթացի ամենահիմնական փուլերից է և առաջադրված թեկնածուների գործարար և մասնագիտական հատկանիշներից է կախված կազմավորվող տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, համայնքային նշանակության հարցերի լուծման, ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը: Կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրությանը սահմանել ավագանու անդամի թեկնածուի համար ինչպես տարիքային, այնպես էլ կրթական չափանիշներ:

Ընտրությունների ժամանակ ամենակարևոր դերերից մեկը թեկնածուների առաջադրման գործընթացում զբաղեցնում են քաղաքական կուսակցությունները: Կուսակցություններին ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու հնարավորություն տալը կնպաստի համայնքներում ավելի ուժեղ և մրցունակ տեղական ինքնակառավարման մարմիններ ունենալուն: Մյուս դեպքում ընտրված քաղաքական կուսակցության կամ դաշինքի թեկնածուն խորհրդարանական ընտրություններում պարտավորված կլինի այդ համայնքում ապահովելու այդ կուսակցության կամ դաշինքի համար ձայներ՝ մեծացնելով քաղաքական կուսակցությունների, հատկապես դրանց տարածքային կառույցների դերը և մասնակցությունը հանրային կյանքին: Ուստի այս ռազմավարությունը ինչ-որ չափով միտված է նաև քաղաքականացնել տեղական ինքնակառավարման համակարգը:

Այն մի կողմից որոշ չափով վտանգ է պարունակում այն իմաստով, որ քաղաքական ուժերի պայքարը կլինի շարունակական նաև հետընտրական փուլում՝ որոշումների ընդունման անհամաձայնության, ձգձգումների, բնականոն գործունեության խաթարման դրսևորումներով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համակարգի ապակենտրոնացված լինելու բացակայության, ինչի արդյունքում կունենանք քաղաքական բնույթի տեղական ինքնակառավարման համակարգ: Եվ արժի մեջբերել Վ. Մակլակովի արդարացի այն միտքը, ըստ որի՝ «տարբեր ուղղվածության քաղաքական կուսակցությունները կապված իրավիճակից հանդես են գալիս որպես կառավարող կամ



խաղում են լոյալ ընդդիմության դեր, որը ցանկացած պահի կարող է վերածվել ոչ ընդդիմադիր ուժի» [Маклаков, 93]:

Տեղական ինքնակառավարման համակարգի քաղաքականացված ապակենտրոնացման լատենտայնությունը նկատելի է նաև ոչ միայն ընտրություններով, այլև համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարցում, իսկ գործադիր իշխանության ընդունած որոշումը կարող է ունենալ քաղաքական ենթատեքստ՝ պայմանավորված քաղաքական նպատակներով:

Ընդհանրացնելով նշենք, որ այս այդ նպատակով առաջարկում ենք սահմանել Երևան համայնքի ղեկավարի ընտրության մեծամասնական ուղղակի ընտրակարգ, որպեսզի համայնքի ղեկավարն ուղղակի ընտրվի բնակչության կողմից և իր գործունեության ընթացքում հաշվետու և պատասխանատու լինի նրա առջև, ոչ թե ավագանու, քանզի բնակիչներին այնքան էլ հասանելի և հասկանալի չէ համայնքի ղեկավարի և ավագանու փոխգործակցության և կոմպենսացիայի հարթությունը: Բացի այդ, միաժամանակ լինել և՛ համայնքի ղեկավար, և՛ ավագանու անդամ, արդեն իսկ դժվարանում է ինչպես լիազորությունների միաժամանակյա կիրառման հավասարակշռությունը, այնպես էլ գործունեության հաշվետվողականությունը երկակի պաշտոն զբաղեցնող «համայնքի ղեկավար-ավագանու անդամ»-ի համար:

### ***Քրականության ցանկ***

1. Ալթունյան Կ., Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում (ուսումնամեթոդական ձեռնարկ), ԵՊՀ հրատ., 2021, 160 էջ: [http://lib.ysu.am/disciplines\\_bk/764edb64d6f1a80db770a33ca7ce8c73.pdf](http://lib.ysu.am/disciplines_bk/764edb64d6f1a80db770a33ca7ce8c73.pdf)
2. Մարգարյան Ս., Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Երևան քաղաքում, Երևան 2011, [https://asue.am/upload/files/science/banber/2011-year-2/4-taron\\_margaryan\\_am.pdf](https://asue.am/upload/files/science/banber/2011-year-2/4-taron_margaryan_am.pdf)
3. Վարդանյան Ե., Տեղական ինքնակառավարման մոդելի ձևավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, Սոցիոլոգիա, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 108:
4. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ. հրատ., 2015, 387 էջ:
5. Маклаков В. В., Эволюция конституционных прав и свобод в странах Западной Европы: специализированная информация по общеакадемической программе «Человек, наука, общество», АН СССР, М. 1993, 223 с.

BASIC ISSUES OF ORGANIZING LOCAL SELF-GOVERNMENT AS AN  
EXAMPLE OF YEREVAN CITY

*Arpine Bisharyan*

*PhD in Law*

*EUA, Chair of Law*

*a.bisharyan@mail.ru*

***Abstract***

The constitutional foundations of the institution of local self-government in the Republic of Armenia were laid by the adoption of the 1995 Constitution.

With the establishment of the new system of the administrative territorial structure of the country, as well as with the adoption of the RA Law "On Local Self-Government" in 1996, power decentralization took place in the Republic of Armenia, which provided the basis for the formation of local self-government.

Since these turning changes, the local self-government in Yerevan has also undergone key changes, starting with the status of Yerevan, ending with the electoral system of the council of elders and the mayor, and the relationship between their powers. Yerevan is a community with a special status, which is due to the exceptional role of the capital in the economic, political, socio-cultural life of the Republic of Armenia, as well as the high degree of concentration of the population.

On November 27, 2005 one of the main constitutional changes related to local self-government was the recognition of Yerevan as a community. As a result of the constitutional regulations, local elections were also held in Yerevan, which were organized for the first time on May 31, 2009 and in the field of self-government of the latter, unique conditions and principles were established, which were not typical of the self-government systems of the rest of Armenia's communities. Similar changes in Yerevan's self-government sector were due to the rapid pace of development of the capital, the need to increase the effectiveness of the formation and operation of the self-government system, and the importance of conducting a unified and effective policy in various fields.

***Keywords:*** Local self-government, Yerevan community, council of elders, community leader, vote, majoritarian system, party.

Ներկայացվել է՝ 25.09.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 04.12.2024թ.